



Ընկ. Սեպուհ Գալփակյան.«Լիբանանը տակից եռում է»



Լիբանանում վերջին օրերին տեղի ունեցած բախումների մասին HayNews.am-ը զրուցեց ՄԴՀԿ Կենտրոնական Վարչության փոխատենապետ, Լիբանանի խորհրդարանի պատգամավոր Սեպուհ Գալփակյանի հետ:

-Պարոն Գալփակյան, ի՞նչ է կատարվում Լիբանանում այս օրերին: Միջազգային լրատվամիջոցները խոսում են բախումների և զոհերի մասին:

Երեկ ժամը 7:30-ի սահմաններում բախում սկսվեց շիա և սուննի համայնքների ներկայացուցիչների միջև: Նկատենք, սակայն, որ բախման մասնակիցները պատկանում էին «Հզբոլլահ» և «Ահբաշ» կուսակցություններին, այսինքն այս բախումն ընթանում էին միայն միմյանց միջև: Չի կարելի ասել, որ բախվեցին իրար ողջ համայնքները: Առաջին բախման հետևանքով զոհվեցին 2 հոգի՝ «Հզբոլլահից» և «Ահբաշից»: Նկատենք, որ այս երկու կուսակցություններն էլ հանդիսանում են մարտի 8-ի դաշինքի անդամ, որն ունի սիրիամետ դիրքորոշում: Բախումներից անմիջապես հետո լիբանանյան բանակի ղեկավարությունը հավաքեց կողմերին և կոչ արեց զսպաձուծություն ցուցաբերել: Մի քանի ժամ հետո նորից բախում տեղի ունեցավ, որի հետևանքով ևս 2 հոգի զոհվեցին: Այս պահին կա 4 սպանված և 15 վիրավոր: Գիշերը բանակը շրջապատեց բախման շրջանները և դադարեցրեց անկարգությունները: Մի պահ անգամ հրթիռակոծություն կար:

-Իսկ ի՞նչպես է հայկական համայնքի վիճակը:

Հայկական համայնքը Լիբանանի համայնքային կյանքի ակտիվ մասնակիցներից է, ուստի և մենք բնականաբար մտահոգ ենք: Այս օրերին Լիբանանը տակից մի տեսակ եռում է: Մինչ այս բախումները փոքր

անախորժություններ արդեն տեղի էին ունեցել: Պետք է սպասել ավելի վատ օրերի, որովհետև առաջիկայում ՄԱԿ-ի դատարանը հրապարակելու է վճիռ, որով տրվելու է երջանկահիշատակ վարչապետ Ռաֆիկ Հարիրիի սպանության հետ կապված շատ հարցերի պատասխան: Լիբանանում կա մի խումբ, որը ոչ մի կերպ չի ցանկանում ընդունել դատարանի որոշումը՝ անգամ չիմանալով, թե այն ինչպիսին է:

-Հնարավո՞ր է քաղաքացիական պատերազմ:

Հիմա իրավիճակը շատ լարված է, սակայն վարչապետ Սաադ Հարիրին փորձում է մեղմացնել այն՝ կողմերին երկխոսության կոչ անելով: Նույնը նաև երկրի նախագահ Սուլեյմանն ու խորհրդարանի խոսնակը: Բոլորն էլ հասկանում են, որ կա մի կարմիր գիծ, որից այն կողմ անցնելը Լիբանանի համար շատ վտանգավոր է:

HayNews.am

Ընկ. ՎԱՀԱՆ ՇԻՐԽԱՆՅԱՆ. ‘ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՎ 1 ՄՊԱՌՆԱԼԻՔԸ ՈՉ ԹԵ ԱԴՐԲԵՉԱՆՆ Է, ԱՅԼ ԹՈՒՐԳԻԱՆ’



Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության շուրջ կրթերը վերստին շիկացել են: Ավելին, ՀԱԿ-ի հետ համագործակցել-չհամագործակցելու վերջին հայտնի հայտարարությունից հետո գործնականում ՀԱԿ-ը եւս ներառվեց այդ վիճաբանությունների կիզակետում: Ուստիեւ, այդ խառնաշփոթի պարագայում ՎԱՀԱՆ ՇԻՐԽԱՆՅԱՆԻ հետ մեր զրույցը ստիպված էինք սկսել ճշգրտող հարցով:

-Պարոն Շիրխանյան, որպես կուսակցական գործչի մեր հարցազրույցում Ձեզ ինչ կարգավիճակով կարող եմ ներկայացնել: Սոցիալ-դեմոկրատական հնչակյան կուսակցության կենտրոնական վարչության անդամ:

- Հարցս ուներ նաեւ հետեւյալ ենթատեքստը. այս երկու օրերին ՀԱԿ որոշ ներկայացուցիչներ, այդ կառույցի ենթակայության տակ գտնվող լրատվամիջոցները մոտավորապես նման կարծիք էին հնչեցնում. չկա եւ չի եղել Շիրխանյան ՄԴՀԿ-ական գործիչ, չկա Աճեմյան ՄԴՀԿ-ական գործիչ, եւ կա միայն Լյուդմիլա Սարգսյանի ղեկավարած ՄԴՀԿ-ն, որի հետ համագործակցել ենք եւ կհամագործակցենք: Ինչ մեկնաբանություն կտաք

այդ կարգի հայտարարություններին: Դա Կոնգրեսի, ՀՀԾ-ի նախասիրություններն են. Մարդիկ իրավունք ունեն ստելու ինչ ուզում են: Ես մեկնաբանություններ տալու խնդիր այստեղ չունեմ:

-Այսինքն Դուք իրավիճակն ընկալում եք այն տրամաբանության շրջանակներում, ինչպես որ ներկայացաք մեր հարցազրույցի սկզբում: Իհարկե վաղուց արդեն ժամանակավրեպ է հարցնել, թե ՄԴՀԿ-ի շուրջ ձեռնարկված պատմությունն ինչ արմատներ ունի: Համենայնդեպս այն նույնիսկ դատական մեկ փուլով է անցել: Բայց ամեն դեպքում այդ դատական փուլում Հայաստանի ՄԴՀԿ ղեկավար դեռ համարվում է Լյուդմիլա Մարգարյանը, եւ կուսակցության կնիքն էլ իր մոտ է: Ներկայանալով կենտրոնական վարչության անդամ գործնականում կրկին անուղղակիորեն կասկածի տակ եք առնում տիկին Մարգարյանի կարգավիճակը:

Հնչակյան կուսակցությունը մյուսներից տարբերվում է նրանով, որ ունի իր կառույցներն աշխարհի բազմաթիվ երկրներում: Կուսակցության բոլոր այդ կառույցները ճանաչել, ընդունել են Լյուդմիլա Մարգարյանի հեռացումը կուսակցությունից: Ներկայումս ընթանում է դատական գործընթաց. առաջին ատյանը ընդունեց որոշում, որ բողոքարկող կողմը ճիշտ է, սակայն վաղեմության ժամկետն անցել է: Երկրորդ՝ վարչական դատարանում էլ կտեսնենք, թե ինչ կլինի: Դատավարության օրը դեռեւս նշանակված չէ: - Ուրեմն կարող է եւ ունենանք երկու հնչակյան կառույց՝ մեկը՝ կնիքով, մյուսն էլ, ինչպես ասացիք, աշխարհի հնչակների կողմից ճանաչված: Որպես հնչակյան կառույց սա միակն է, որովհետեւ, կրկնում եմ, այն ճանաչված է հնչակյան ընտանիքի կողմից: Իսկ մյուսի գոյությունը ինչի համար է, ինչ նպատակներ է հետապնդելու՞ դա իրենց խնդիրն է, ինձ չի էլ հետաքրքրում:

- Ամեն դեպքում դուք եւս ՀԱԿ-ի հետ անձնապես ունեիք սերտ առնչություններ եւ խոշոր հաշվով հնչակյան կուսակցությանն անդամակցեցիք հենց ՀԱԿ-ի հետ համագործակցության շրջանակներում: Եվ ինչու է հիմա այսպես, օրինակ ինչու է ՀԱԿ-ն ասում, թե տիկին Մարգարյանին ճանաչում է, մյուս բոլորին՝ ոչ:

- Կենտրոնական վարչության հայտարարությունը շատ հստակ է, եւ այն տալիս է այդ կարգի հարցերի պատասխանները: Մնացյալը համարում եմ մանրուքներ քաղաքական դաշտի համար:

ՈՂ-Ն ԱՊԱՀՈՎԵԼՈՒ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ԲՈԼՈՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԻՑ՝

-Անկեղծ ասած՝ թիկունքին տարիների քաղաքական եւ պետական բուռն գործունեության պաշար ունեցող Ձեր կարգի գործչի հետ բավարար չէր լինի գրուցել միայն թեկուզեւ աղմկահարույց բնույթի, սակայն այնուամենայնիվ նեղ կուսակցական հարցերի շուրջ: Ուստի եւ թույլ տվեք մեր հարցազրույցը շարունակել Ձեզ հետ արդեն որպես Հայաստանի

պաշտպանության նախկին փոխնախարարի: Կապված ՌԴ նախագահի հայաստանյան այցի եւ մեր երկրում տեղակայված ռուսական ռազմաբազայի գործունեության ժամկետի երկարաձգման, դրա կարգավիճակի որոշակի փոփոխությունների հետ^ա սպասվում է, որ բավականին լուրջ փոփոխություններ կլինեն նաեւ մեր ողջ տարածաշրջանում: Կիսնդրեի Ձեր գնահատականները այդ իրավիճակի հետ կապված: Առավել եւս, որ այդ բազան Հայաստանում տեղակայվել է Ձեր փոխնախարար եղած տարիներին: Այսինքն ով-ով, բայց Դուք պետք է որ ամբողջական պատկերացում ունենաք դրա հետ կապված:

- Ես միանշանակ դրական եմ գնահատում ռազմական բազայի ժամկետի երկարաձգումը եւ արձանագրության մեջ փոփոխությունների իրականացումը:

Բազան Հայաստանում է տեղակայվել ոչ միայն իմ փոխնախարար աշխատած ժամանակաշրջանում, այլեւ անձամբ ես եմ այդ բազայի պայմանագիրն ու դրա բոլոր հավելվածները ներկայացրել Ազգային ժողովի վավերացմանը:

Ռուսական ռազմական բազան, նախնական պայմանավորվածության համաձայն, պետք է ապահովեր Հայաստանի անվտանգությունը արեւմտյան եւ հարավային սահմաններից՝ Թուրքիայից եւ Իրանից, եւ դա արել է: Պայմանագրին կից կան 4 արձանագրություն եւ 13 համաձայնագիր, եւ այդ համաձայնագրերից մեկում նշված էր, որ Ռուսաստանն իր վրա է վերցնում Հայաստանի անվտանգության ապահովումը արտաքին սահմաններից: Հայաստանի մյուս երկու հարեւանները՝ Վրաստանը եւ Ադրբեջանը այն ժամանակ Կոլեկտիվ անվտանգության պայմանագրի անդամներ էին, եւ արտաքին սահման ասելով ընկալվում էր Թուրքիան եւ Իրանը:

Ներկայումս իրավիճակը փոխվել է: Կոլեկտիվ անվտանգության պայմանագրին փոխարինել է ՀԱՊԿ-ը, որի անդամ չեն ո՞չ Վրաստանը եւ ո՞չ էլ Ադրբեջանը: Ռուսաստանն էլ այդ փոփոխությունները հաշվի առնելով՝ առաջարկում է նոր ձեւակերպում, այսինքն՝ ռուսական կողմը ապահովում է Հայաստանի Հանրապետության անվտանգությունը բոլոր հարեւաններից: Սա միայն կարելի է ողջունել: Մենք դեռ այն ժամանակ էինք առաջարկում այդ դրույթը մտցնել, սակայն ռուսական կողմը պատճառաբանեց, որ Ադրբեջանն ու Վրաստանը կոլեկտիվ անվտանգության պայմանագրի եւ ԱՊՀ անդամներ են: Պայմանագրում կան շատ լուրջ այլ հավելումներ եւս սպառազինության արդիականացման, այլ հատուկ միջոցների տեղակայման հետ կապված: Դրանք ի գորու կլինեն Հայաստանի ազգային անվտանգությանն ուղղված ցանկացած սպառնալիք չեզոքացնել եւ ոչնչացնել, ինչը նույնպես շատ ողջունելի է:

- Փորձենք այդ ամենը կապել Ղարաբաղի հետ. ադրբեջանական ենթադրյալ ագրեսիայի դեպքում, Ձեր կարծիքով, այդ պայմանագիրը կգործի:

- Ինչպես նշեցի՝ պայմանագրի նոր տարբերակը նախատեսում է Հայաստանի անվտանգության ապահովումը արդեն նաեւ ադրբեջանական

կամ վրացական հնարավոր ագրեսիայից: Ղարաբաղի խնդիրը միջազգային քննարկումների հարթությունում է, եւ ըստ այդմ էլ դժվար է ասել, թե համաձայն պայմանագրի Ղարաբաղը ադրբեջանական ագրեսիայի ենթարկվելու դեպքում ռուսական կողմը ինչպես իրեն կդրսետորի: Դա նաեւ տվյալ պահի քաղաքական իրավիճակի խնդիր է: Բայց ամեն դեպքում պայմանագիրը քայլ առաջ է Հայաստանի անվտանգությունն ապահովելու ուղղությամբ:

- Ստացվում է, որ Ռուսաստանը մեզ շատ մեծ օգնություն է ցուցաբերում: Ձեր կարծիքով՝ հանուն ինչի: Վերջին հաշվով արդի աշխարհում սիրուն աչքերի համար ոչ մեկը մյուսի համար ոչինչ չի անի:

- Ռազմական դաշինքներն ունեն իրենց յուրահատկությունները: Ամեն դեպքում դրանք տնտեսական պայմանագրեր չեն, որ հաշվեն ով քանի դրամ շահեց...

- Սակայն պետությունների շահերն էլ միայն դրամներով չէ, որ չափվում են:

- Դաշինքը հնարավոր է կայացնել եւ պահպանել, եթե կողմերի ազգային շահերը համընկնում, կամ միմյանց լրացնում են: Երբ նայում ենք Հայաստանի աշխարհաքաղաքական դիրքին, շահերին, ապա որեւէ այլ մեծ երկիր, որը կունենար մեր այդ շահերին համահունչ ազգային շահեր, բացի Ռուսաստանից չենք գտնի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԹԻՎ 1 ՍՊԱՌՆԱԼԻՔԸ ՈՉ ԹԵ ԱԴՐԲԵՋԱՆՆ Է, ԱՅԼ ԹՈՒՐՔԻՍՆ՝

- Իսկ կոնկրետ որ շահերի մասին է խոսքը, ավելի դետալացնել հնարավոր է:

- Ռուսաստանն ունի աշխարհաքաղաքական ազդեցության պահպանման խնդիր նախկին ԽՍՀՄ տարածաշրջանում, քանի որ այդ ազդեցության կորուստը նշանակում է նաեւ ՌԴ-ի ռազմավարական շահերի կորուստ եւ նույնիսկ ազգային անվտանգության հետ կապված որոշակի խնդիրներ: Այդ առումով Ռուսաստանը եղել է եւ այսօր էլ լուրջ հայտ է ներկայացնում՝ հետագայում եւս, մասնավորապես հարավկովկասյան տարածաշրջանում, լինելու հետ կապված: Այն նույն Կովկասում, որը դարձել է աշխարհաքաղաքական խոշորագույն ծրագրերի բախման կիզակետ՝ որպես կոմունիկացիոն միջանցք: Իսկ Հայաստանը այդ գերտերություններից մեկի դաշնակիցն է, եւ, կարծում եմ՝ ավելին փնտրելն ու ձգտելն անլուրջ է:

- Սակայն եթե Ռուսաստանը, ինչպես ասացիք, նախկին ԽՍՀՄ տարածաշրջանում է ձգտում վերականգնել իր ազդեցությունը, նույն հաջողությամբ նման փորձեր պետք է իրականացնի Ադրբեջանում, եւ այդ փորձերը փաստացի կան: Մեկ ձեռքով Հայաստանի հետ ընկերություն անելը, մյուսով՝ Ադրբեջանի, նոր հակասություններ չի առաջացնի: Ըստ Ձեզ, դա ինչի կտանի:

- Ես տեղյակ եմ, որ դեռ հայր Ալիեւն է մի քանի անգամ Ռուսաստանին առաջարկել Ադրբեջանին ընդունել որպես ռազմավարական դաշնակից, այնտեղ տեղադրել ռազմական բազա, եւ փոխարենը օգնել, որ Լեռնային Ղարաբաղը մնար Ադրբեջանի կազմում: Ռուսաստանը հրաժարվել է: Այսօր

Էլ Ադրբեջանը փորձեր կանի ՌԴ-ի հետ հարաբերությունները կարգավորելու, ռազմավարական դաշնակցի կարգավիճակի հասցնելու: Սակայն դա չի հաջողվում. Ռուսաստանը լավ պատկերացնում է, որ Ադրբեջանը Թուրքիայի ռազմավարական դաշնակիցն է, բազմաթիվ պայմանագրեր, համաձայնագրեր նրանց միջև արդեն կնքված են: Իսկ Թուրքիան, վերջին հաշվով, ՆԱՏՕ-ի անդամ գլխավոր երկրներից մեկն է, եւ այստեղ ռազմավարական, աշխարհաքաղաքական շահերի համընկնում տեղի

չի

ունենա:

- Օրերս, Գյուլի Ադրբեջան կատարած այցի շրջանակներում խոսվեց այդ երկու երկրների ռազմավարական հարաբերությունների, փոխադարձ օգնության մասին հերթական պայմանագրի մասին: Իսկ դա ադրբեջանական աղբյուրները համարում են պատասխան հայ-ռուսական պայմանագրի: Այս զարգացումները հակասությունների խորացում չեն նշանակում:

- Վտանգի ժամանակ փոխօգնության պայմանագիր վաղուց էր ստորագրված եւ իրականացվում է: Վերջին հաշվով ադրբեջանական բանակը մարզվում, զինվում եւ ապահովվում է Թուրքիայի օժանդակությամբ:

Այս նոր զարգացումները Հայաստանից կախված չեն: Մեզ մնում է միայն ճիշտ կողմնորոշվել քաղաքական տվյալ իրավիճակում եւ համարժեք որոշումներ ընդունել: Այսպես թե այնպես այդ հակասությունները գոյություն ունեն, դրանք գնալով խորանալու են, քանի որ Անդրկովկասյան կոմունիկացիոն միջանցքին տիրելը մեծ խնդիր է ե՞լ Արեւմուտքի, ե՞լ ՌԴ-ի, ե՞լ Թուրքիայի համար: Ու նաեւ այստեղից է, որ Ռուսական բազայի գործունեության ժամկետի երկարաձգումը, դրա արդիականացումը Հայաստանի համար խիստ կարեւոր է:

- Իսկ Ղարաբաղի հանդեպ օրեցօր սրվող ալիեյան ագրեսիվ հայտարարությունների վերջը այդ նոր պայմանագիրը կտա:

- Որ այն ընդհանուր առմամբ կայունացնելու է վիճակը Անդրկովկասում՝ միանշանակ է: Իսկ պատերազմի վտանգի վերջնական չեզոքացումը կախված է նաեւ հետագա զարգացումներից: Այսինքն՝ թե մյուս կողմը ինչ քայլեր կձեռնարկի: Դրանցից կախված կարող են նոր զարգացումներ լինել, եւ Հայաստանը պետք է պատրաստ լինի ադեկտվատ պատասխանել:

- Գանք մյուս կողմից. Թուրքիան մշտապես, իսկ այս վերջին տարիներին ավելի ակտիվորեն փորձում է ներխուժել մեր տարածաշրջան: Այս պայմանագիրը գործնականում նրա առաջ լուրջ պատնեշ է դառնում, եւ միզուցե պետք է առաջին հերթին Թուրքիայի քայլերի±ն սպասել, թեկուզեւ տարաբնույթ սադրանքների, տեսքով ասենք Ղարաբաղյան հարցի հետ կապված:

- Արդեն ակնհայտ է, որ Թուրքիան ամբողջովին պաշտպանում է Ադրբեջանի շահերը, թեկուզեւ նույն Ղարաբաղի հարցում: Եվ ինձ զարմացնում են հայաստանյան այն քաղաքական գործիչները, ովքեր շարունակում են ողջունել Թուրքիայի հետ հարաբերությունների հաստատման, սահմանները բացելու առաջարկները, պատճառաբանելով,

թե այդ կերպ մեր երկիրը տնտեսապես կզարգանա: Դրանք կեղծ պատճառաբանություններ են, Հայաստանը այդ կերպ չի զարգանա, ավելին, քայքայվելու է: Ամեն դեպքում Թուրքիայի նպատակն անփոփոխ է. Ադրբեջանին հզորացնել, Հայաստանը քայքայել, որպեսզի այդ կերպ խուսափի իր համար մեծ վտանգ ներկայացնող Ցեղասպանության ճանաչման հարցից: Ուստի ես պետք է ընդունենք մեկ պարզ ճշմարտություն. Հայաստանի թիվ մեկ սպառնալիքը ոչ թե Ադրբեջանն է, այլ Թուրքիան: Նույն Թուրքիան, որ 1990-ականների սկզբներին զինեց Ադրբեջանին եւ դրդեց հարձակման Ղարաբաղի վրա, որը 1993-ին պատրաստվում էր հարձակվել Հայաստանի վրա, որը այսօր էլ ամեն կերպ օժանդակում է ադրբեջանական բանակին: Այս ամենը նկատի ունենալով՝ Հայաստանը պետք է իր ռազմական ստրատեգիան ճշգրիտ պահպանի: Ամեն դեպքում մեզ հայտնի են մեր թշնամիները եւ մեր խնդիրները, ու այս իրավիճակում ջլատել հասարակության ուժերը ընտրությունների միջեւ՝ գտնում եմ սխալ:

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԲԱԽՈՒՄՆԵՐ

-Բավականին սահում անցում կատարեցիք դեպի ներհայաստանյան իրականություն: Այսօր, իրոք, մեր երկրում կարելի է տեսնել ուժերի, որոնք նայում են Արեւմուտք: Նկատելիորեն ավելի շատ են դեպի Հյուսիս նայող ուժերը: Այսինքն՝ խոսքը նաեւ ներքին հակասության մասին է, եւ դրանց բախումը հնարավոր համարում եք:

- Չեմ կարծում, թե դա կարող է բերել բախման, քանի որ ներկայումս Հայաստանի բնակչության եւ նույնիսկ Սփյուռքի մեծագույն մասը ունի կողմնորոշում դեպի Ռուսաստան: Կա իհարկե մի հատված, որը համարում է, որ Հայաստանի ապագան Արեւմուտքում է: Այդ հակասությունները նկատվում են հատկապես տեղեկատվական դաշտում: Դա, միգուցե, կարող է տպավորություն ստեղծել, որ Հայաստանում հասարակությունը ճեղքվել է, որ կան մեծ զանգվածներ, որոնք դեմ են Ռուսաստանի հետ հարաբերությունների խորացմանը: Բայց այդ գուտ ինֆորմացիոն հնարք է, եւ իրականում, կրկնում եմ, Հայաստանի բնակչության բացարձակ մեծամասնությունը մեր երկրի անվտանգությունը տեսնում է հենց ՌԴ-ի հետ հարաբերությունների խորացման մեջ: Միաժամանակ ընդունենք նաեւ, որ նման ինֆորմացիոն մանիպուլյացիաները արդի աշխարհում բավականին հզոր ուժ են: Հայաստանում էլ դրանք անտեսել չի կարելի, եւ պետք է տարվի լուրջ աշխատանք, որ Հայաստանի ամեն մի քաղաքացի իրականում հասկանա, թե իր անվտանգության հարցում ինչ իրական սպառնալիքներ կան, եւ որոնք են դրանց չեզոքացման ուղղությունները: Հայաստանի ապագան Արեւմուտքում տեսնողները ընդհուպ մինչեւ առաջարկում են Հայաստանի ինտեգրումը ՆԱՏՕ-ին: Ես ոչինչ չունեմ ՆԱՏՕ-ի դեմ, սակայն փաստ է, որ այդ կառույցի հիմնական երկրների շահերը կապված են Ադրբեջանի եւ Կենտրոնական Ասիայի էներգակիրների հետ: Իսկ Հայաստանի առումով նման ստրատեգիական

շահ նրանք չեն մատնանշել: Այսինքն՝ խոսքը մի կառույցի մասին է, որը բացահայտ ասում է, որ մեր թշնամու շահը իր համար ավելի կարեւոր է, քան մերը: Ուստի եւ նման ուղղությամբ գնալը անթույլատրելի եւ անիրականանալի է: Հետո տեսանք, թե ինչ տեղի ունեցավ Վրաստանում՝ այնտեղից ռուսական ռազմաբազաները հանելուց հետո: Եվ վերջապէս, պատկերացնենք, թե ինչ տեղի կունենա Հայաստանում, եթե գնանք դեպի ՆԱՏՕ: Ենթադրենք գալիս, Հայաստանում հիմնում են իրենց ռազմաբազաները, եւ դրանցից յուրաքանչյուրում առկա է թուրքական ստորաբաժանում...

- Սակայն ՆԱՏՕ-ի գորավարժություն սեպտեմբերին պատրաստվում ենք անցկացնել Հայաստանում:

- Այո: Համաձայնությունը տրվել է դեռ 2007-ին՝ Ռոբերտ Քոչարյանի կողմից: Սակայն դրա անցկացումը, կարծում եմ, միայն լրացուցիչ լարվածություն կառաջացնի ե՞ւ տարածաշրջանում, ե՞ւ հայ-ռուսական հարաբերություններում, ե՞ւ Հայաստանի հասարակության մեջ:

ՎՐԱՍՏԱՆԸ ՈՒ ԻՐԱՆԸ

-Հայաստանյան ռազմաբազայի նմանօրինակ արդիականացումը նշանակում է, որ մոտ ապագայում Վրաստանը հայտնվում է Աբխազիայում, Հարավային Օսեթիայում եւ մեր երկրում առկա երեք հզոր ռազմաբազաներից կազմված եռանկյունու կենտրոնում: Կարո՞ղ է դա հանգեցնել հակավրացական հետեւանքների:

- Չեմ կարծում: Ամեն դեպքում հայաստանյան ռազմաբազայի առումով նման պայմանավորվածություններ չկան: Սակայն միջազգային փորձը ցույց է տալիս, որ, օրինակ, արաբական երկրներում տեղակայված բոլոր ամերիկյան ռազմաբազաները համագործակցված մասնակցություն ունեցան իրաքյան ագրեսիային, չնայած բազաների տեղակայման երկրները որոշ դեպքերում դեմ էին: Մեզ մոտ դեռ նախադեպ չկա, որ ռուսական ռազմաբազան մասնակցի մեր երկրի սահմաններից դուրս ինչ-որ գործողությունների: Իսկ թե հետագայում էլ չի մասնակցի՝ իհարկե, ոչ կարելի է բացառել, ոչ էլ հաստատել:

- Մեր գրույցն ամբողջական կդառնա, եթե այս բազայի թեմայի շրջանակներում խոսենք մեր մյուս հարեւանի՝ Իրանի մասին: Բազայի պայմանագրին զուգահեռ՝ սեպտեմբերի 21-ին նախատեսված է Բուշերի ատոմակայանի վերագործարկումը եւս: Այս ամենը չի՞ նմանվում մեկ ամբողջական շղթայի օղակների:

- Ե՞ւ Հայաստանը, ե՞ւ ՌԴ-ն բազմիցս պաշտոնապէս հայտարարել են, որ դեմ են Իրանի դեմ պատժամիջոցներին ու ռազմական գործողություններին: Սա միասնական տեսակետ է եւ խիստ հիմնավորված. Իրանի շուրջ իրավիճակի թեժացումը լավ բան չի խոստանում ո՞չ մեզ, ո՞չ ՌԴ-ին, ո՞չ էլ ամբողջ աշխարհին: Ինչքան կայուն լինի Իրանը, այնքան մեզ է ձեռնտու, եւ պետք է մեր հնարավորությունների սահմաններում ջանքեր գործադրենք՝ այդ կայունությունը պահպանելու համար: Այդ կայունության

տեսանկյունից, կարծում եմ, Իրանը կողմ է, որ Հայաստանում ռուսական ներկայությունը ամրապնդվի:

ՔԵՐՈՒ ՄԱՐԳՄՅԱՆ – ԻՐԱՎՈՒՆՔ